

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի ուղերձը՝ Մարտի 8-ի առթիվ

Սիրելի՛ կանայք, մայրեր, դուստրեր,

Ջերմ մաղթանքներով, խորին հարգանքով ու ակնածանքով շնորհավորում եմ ձեզ գարնանային այս լուսավոր ու բերկրալից տոնի՝ Մարտի 8-ի կապակցությամբ:

Տոնն իր մեջ ներառում է կյանքի հավերժության ու վերածննդի խորին խորհուրդը, քանի որ այն նվիրված է ձեզ՝ մեր սիրելի՛ մայրեր, կանայք, քույրեր ու դուստրեր:

Հայ ժողովրդի համար կանանց տոնն ունի խոր հոգեբանական մեկնություն ու յուրահատուկ համամարդկային արժեք: Մեր ժողովուրդն իր երկարամյա պատմության ընթացքում հայ կնոջ մեջ է տեսել ազգի հարատևությունն ու ընտանեկան սուրբ օջախի պահպանման ու բարեկեցության գրավականը:

Անգնահատելի է սյունեցի կնոջ դերակատարությունը ընտանիքի ամրության, հայ ժողովրդի ստեղծած հոգևոր ու նյութական արժեքների արարման ու պահպանման գործում: Անփոխարինելի է նրանց մերօրյա ավանդը կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության, երկրի պաշտպանության և այլ ասպարեզներում:

Տոնական այս օրերին մաղթում եմ ձեզ բարեկեցություն, առողջություն, երջանկություն և ընտանեկան ջերմություն:

Թո՛ղ ժպիտն ու բարեմաղթանքներն ուղեկցեն ձեզ տարվա բոլոր օրերին և իրականանան ձեր նվիրական երազանքներն ու ցանկությունները:

ՀՀ Սյունիքի մարզպետ

Ս. Խաչատրյան

2016թ.